ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 57-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 11՝ հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:
3. Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանի աշխատակազմի 2015 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. «ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների 2015 թվականի ուսման վճար սահմանելու մասին:
7. Ջրվեժ համայնքի սեփականություն համարվող հողամասերից 2015 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարման առաջարկվող հողամասերի ցուցակը հաստատելու մասին:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու մասին:
9. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ
ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՐԶ ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ *03502805*

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 58-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, 8-րդ հոդվածի 7-րդ մասով, 14-րդ հոդվածով,

Համայնքի ավագանին *որոշում է.*

Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ
ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 9-ի N 58-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա.մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7 500 դրամ,

2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20 000 դրամ,

գ.1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

դ.3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1 500 դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2 500 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1 500 դրամ,

2)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 2 500 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10 000 դրամ,

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10 000 դրամ:

5.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար 0 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,

2)հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ 180 000 դրամ,

3)խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ 45 000 դրամ,

4)թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար՝ 50 000 դրամ,

5)համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա.հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6 000 դրամ.

բ.ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1 000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000 դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 500 000 դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝ 1 000 000 դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500 000 դրամ,

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150 000 դրամ:

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ,

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 000 դրամ,

3)այլ արտաքին գովազդի համար՝ 1 000 դրամ,

4)դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1 000 դրամ:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղական համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 10 000 դրամ:

10.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5 000 դրամ:

11.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1)մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ.

2)1001 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար՝ 50 000 դրամ գումարած 1000 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 10 դրամ:

12.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 5 000 դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

1)կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 224,4 դրամ,

2)ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական 2500 դրամ:

14.Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել 500 դրամ:

15.Սույն հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված 200 դրամ գումարից 74,4 դրամը վճարել համայնքի բյուջեից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 59-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը սահմանել 400 000 (չորս հարյուր հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

| | կողմ (10) | դեմ (0) | ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ | | | |
| ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ | | | |
| ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | | | |
| ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | |
| ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ | | | |
| ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | | | |
| ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 60-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով,

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարանի աշխատակազմի 2015 թվականի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

կողմ (10) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ
ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

Հավելված N 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքի
ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 9-ի N 60-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
*03502805*

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին:

Հավելված N 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 9-ի N 60-Ա որոշման

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Հավելումը (դրամ) | Հավելա-վճարը (դրամ) | Աշխատավարձի չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 400000 | - | - | 400000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 240000 | - | - | 240000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | - | 1 | 200000 | - | - | 200000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 270000 | - | 27000 | 297000 |
| 5 | | առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 200000 | - | 20000 | 220000 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2.2 | 1 | 190000 | - | 19000 | 209000 |
| 7 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-3 | 1 | 180000 | - | - | 180000 |
| | | ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին | | | | | | | |
| 8 | | բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1-2 | 1 | 240000 | - | 24000 | 264000 |
| 9 | | առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 200000 | - | 20000 | 220000 |
| 10 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 190000 | - | 19000 | 209000 |
| 11 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 180000 | - | - | 180000 |
| 12 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-2 | 1 | 180000 | - | 18000 | 198000 |
| | | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | | |
| 13 | | Գործավար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 150000 | - | - | 150000 |
| 14 | | Օպերատոր | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 150000 | - | - | 150000 |
| 15 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 120000 | - | - | 120000 |
| 16 | | Հավաքարար-պահակ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 120000 | - | - | 120000 |
| | | Ընդամենը | | | 16 | 3210000 | - | 147000 | 3357000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 61-Ա

## «ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով,

Համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «Ջրվեժի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

| կողմ (10) | դեմ (0) | ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ | | |
| ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | | |
| ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ | | |
| ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ | | |
| ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | | |
| ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 9-ի N 61-Ա որոշման

«ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 24
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Հավելումը (դրամ) | Աշխատավարձի չափը-ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | «ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ | Տնօրեն | 1 | 240000 | - | 240000 |
| 2 | | Հաշվապահ | 1 | 145000 | - | 145000 |
| 3 | | Գանձապահ-օպերատոր | 1 | 140000 | - | 140000 |
| 4 | | Տեսուչ | 1 | 130000 | - | 130000 |
| 5 | | Էլեկտրիկ | 1 | 90000 | - | 90000 |
| 6 | | Վարորդ աղբատար մեքենայի | 1 | 160000 | - | 160000 |
| 7 | | Վարորդ ինքնաթափ մեքենայի | 1 | 160000 | - | 160000 |
| 8 | | Վարորդ-տրակտորիստ | 1 | 160000 | - | 160000 |
| 9 | | Վարորդ ջրող մեքենայի | 1 | 120000 | - | 120000 |
| 10 | | Բանվոր աղբատար մեքենայի | 1 | 160000 | - | 160000 |
| 11 | | Բանվոր ինքնաթափ մեքենայի | 2 | 160000 | - | 320000 |
| 12 | | Բանվոր առուներ մաքրող | 1 | 90000 | - | 90000 |
| 13 | | Բանվոր ջրագծերի և կոյուղագծերի սպասարկման | 1 | 120000 | - | 120000 |
| 14 | | Մեխանիզատոր | 1 | 150000 | - | 150000 |
| 15 | | Հավաքարար | 9 | 90000 | - | 810000 |
| | | Ընդամենը | 24 | 2115000 | - | 2995000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 62-Ա

## «ՋՐՎԵԺԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով,

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

| կողմ (10) | դեմ (0) | ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ | | |
| ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | | |
| ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ | | |
| ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ | | |
| ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | | |
| ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

*03502805*

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 9-ի N 62-Ա որոշման

# «ՋՐՎԵԺԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 20
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Հավելումը (դրամ) | Աշխատավարձի չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 6 | 7 | 8 | 10 |
| 1 | «ՋՐՎԵԺԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ | Տնօրեն | 1 | 90000 | - | 90000 |
| 2 | | Ուսուցիչներ | 16 | 80000 | - | 1280000 |
| 3 | | Հաշվապահ | 1 | 80000 | - | 80000 |
| 4 | | Դաշնամուր լարող | 1 | 75000 | - | 75000 |
| 5 | | Հավաքարար | 1 | 75000 | - | 75000 |
| | | Ընդամենը | 20 | 400000 | - | 1600000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

## ՈՐՈՇՈՒՄ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 63-Ա

### «ՋՐՎԵԺԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և համայնքից երաժշտական դպրոց հաճախող երեխաներին խրախուսելու նպատակով,

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների 2015 թվականի համար ուսման վճար սահմանել 1 000 (մեկ հազար) դրամ, եթե երեխայի ծնողները (ծնողը) կամ նրա օրինական ներկայացուցիչները (ներկայացուցիչը) հաշվառված են Ջրվեժ համայնքում:

2. Որոշման առաջին կետում չներառված ծնողների (ծնողի) կամ նրա օրինական ներկայացուցիչների (ներկայացուցչի) «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների ուսման վճար սահմանել 5 000 (հինգ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

| կողմ (10) | դեմ (0) | ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ | | |
| ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | | |
| ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ | | |
| ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ | | |
| ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | | |
| ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 64-Ն

## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով,

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Ջրվեժ համայնքի սեփականություն համարվող հողամասերից 2015 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարման առաջարկվող հողամասերի ցուցակը՝ համաձայն հավելվածի:

2.Հողամասերի օտարումից առաջացած միջոցներն ուղղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծմանը:

| կողմ (10) | դեմ (0) | ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ | | |
| ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | | |
| ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ | | |
| ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ | | |
| ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | | |
| ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | |
| ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

*03502805*

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 9-ի N 64-Ն որոշման

## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| հ/հ | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը | Մակե-րեսը քառ.մ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափա-կումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը | Ճանապարհ-ների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահա-ղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ | Գյուղատնտեսա-կան հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկա-կան պայմանները, հողատեսքը* | Շրջակա միջավայրերի և պատմամշա-կութային հուշարձանների պահպանության, բնապահպանա-կան և հողերի պահպանության միջոցառումները | Մեկնար-կային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 306-006 | 3502.0 | գյուղատնտեսական, վարելահող | գյուղատնտեսական գործունեության համար | չկա | չկա | ջրովի IV կարգ | չկա | 840500 |
| 2 | 309-005 | 2892.0 | գյուղատնտեսական, վարելահող | գյուղատնտեսական գործունեության համար | չկա | չկա | ջրովի IV կարգ | չկա | 694100 |
| 3 | 311-039 | 1519.0 | գյուղատնտեսական, վարելահող | գյուղատնտեսական գործունեության համար | չկա | չկա | ջրովի III կարգ | չկա | 455700 |
| 4 | 312-015 | 1902.0 | գյուղատնտեսական, վարելահող | գյուղատնտեսական գործունեության համար | չկա | չկա | ջրովի III կարգ | չկա | 570600 |
| 5 | 0342-0047 | 804.0 | գյուղատնտեսական, այլ հողատեսք | գյուղատնտեսական գործունեության համար | չկա | չկա | այլ | չկա | 145000 |
| 6 | 0342-0050 | 732.0 | գյուղատնտեսական, այլ հողատեսք | գյուղատնտեսական գործունեության համար | չկա | չկա | այլ | չկա | 132000 |
| 7 | 13 փողոց թիվ 1/2 0003-0031 | 220.2 | բնակավայրի հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 990900 |
| 8 | 13 փողոց թիվ 58/1 0361-0020 | 754.7 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 3396150 |
| 9 | 18 փողոց թիվ 33 357-038 | 803.0 | բնակավայրի հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 3613500 |
| 10 | 29 փողոց թիվ 8/1 0136-0017 | 397.2 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 1787400 |
| 11 | 34 փողոց թիվ 9 0144-0014 | 966.9 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 4351050 |
| 12 | 34 փողոց թիվ 11 120-008 | 734.0 | բնակավայրի հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 3303000 |
| 13 | 34 փողոց թիվ 14 962-001 | 735.0 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 3307500 |
| 14 | 34 փողոց թիվ 16 962-002 | 739.0 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 3325500 |
| 15 | 35 փողոց թիվ 6 961-008 | 1000.0 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 4500000 |
| 16 | 35 փողոց թիվ 8 961-007 | 946.0 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 4257000 |
| 17 | 36 փողոց թիվ 1 961-011 | 1000.0 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 4500000 |
| 18 | 39 փողոց 1 նրբ. թիվ 10 0144-0017 | 966.9 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 4351050 |
| 19 | 40 փողոց թիվ 5 0115-0035 | 552.7 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | -- | չկա | 2487150 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 65-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժի 45-րդ փողոցի թիվ 13/2 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 600,0 քառ.մետր մակերեսով հողակտորը, ինչպես նաև ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 114,01 քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի տունը:

| | կողմ (10) | դեմ (0) | ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ | | | |
| ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ | | | |
| ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | | | |
| ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | |
| ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ | | | |
| ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | | | |
| ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՄԱՐԶ ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ԿՈՏԱՅՔԻ ... *03502805*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2014 թվականի N 66-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ վարձակալությամբ տրամադրելու համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժի 45-րդ փողոցի թիվ 13/3 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 553,0 քառ.մետր մակերեսով հողակտորը, ինչպես նաև ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 49,6 քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի տունը:

2. Հողատարածքը և բնակելի տունը տրամադրել վարձակալությամբ 10 տարի ժամկետով՝ որպես տնամերձ և բնակելի տուն օգտագործելու նպատակով:

3. Հողի տարեկան վարձավճարի չափ սահմանել 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, բնակելի տան տարեկան վարձավճարի չափ սահմանել 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

| | կողմ (10) | դեմ (0) | ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| ԱՐԱՄԱՅԻՍ ԵՓՐԻԿՅԱՆ | | | |
| ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ | | | |
| ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | | | |
| ԳՆԵԼ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ԺՈՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | |
| ՄԱՐՏԻՆ ՊԱՊԱՆՅԱՆ | | | |
| ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | | | |
| ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *03502805*

2014 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ